ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ Ն.ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՐՏԱԴԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ- ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

ԿԱՏԱՐՈՂ- ՎԱՆՈՒՀԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ-ՈՍԿԱՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԱՇՏԱՐԱԿ 202

Բովանդակություն

Ներածություն ……3
1. Թեստը որպես աշխատանքի արդյունքի և որակի գնահատման ամենատարածվածմեթոդ……..……4
2. Թեստի բնութագրիչները……..7
3. Թեստի տեսակները……...11
4. Թեստային հարցերի և առաջադրանքների տիպերը……..14
5. Պատմություն առարկայից թեստի կազմման առանձահատկությունները……..20
Եզրակացություն……..23
Օգտագործված գրականություն……..24

Ներածություն

Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանվել են սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման նոր սկզբունքներ, ներդրվել է գնահատման նոր մեթոդաբանություն: Ըստ հանրակրթության պետական նոր չափորոշչի՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականցվելու են միավորային և ձևավորող գնահատում, իսկ տարրական դպրոցում՝ միայն ձևավորող գնահատում:Որևէ առարկայի ուսումնական փուլ սկսելուց առաջ պետք է իրականացվի նախնական հայտորշում, որի նպատակն է սովորողների նախնական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների վերհանումը, բացահայտումը, որն անհրաժեշտ է լինելու ուսումնական գործընթացը պլանավորելու և արդյունավետ կազմակերպելու համար:

Այդ նպատակով ուսումնական գործընթացում օգտագործվում են բազմաթիվ գործիքներ, որոնք նպատակն է ի հայտ բերել ձեռէ բերած գիտելիքների և կարողությունների չափը, դրամք դարձնել չափելի:

Նմանատիպ գործառույթ են իրականացնում նաև թեստային առաջադրանքները, որոնց միջոցով ուսուցիչը կարող է ստուգել, արդյոք աշակերտները հասնում են ակնկալվող արդյունքներին, մշակում են համապատասխան ռազմավարություններ՝ ուսուցման գործընթացն ավելի արդյուանվետ կազմակերպելու նպատակով:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել պատմություն առարկայից թեստի կազմման առանձահատկությունները:

Խնդիրներն են՝

1. ներկայացնել թեստը որպես աշխատանքի արդյունքի և որակի գնահատման ամենատարածված մեթոդ
2. բացահայտել թեստավորման միջոցով գնահատման առավելություններն ու թերությունները
3. ուսումնասիրել թեստերի և թեստային առաջադրանքների տեսակները ու ձևերը
4. Ներկայացնել թեստերի կիրառելիությունը պատմություն առարկայի ուսուցման գործընթացում: կիրառելիությանը, դրանց ներկայացվածպահանջներին, չափորոշիչներին և արդյունավետությանը:

ԳԼՈՒԽ 1.

1. 1.Թեստը որպես աշխատանքի արդյունքի և որակի գնահատման ամենատարածված մեթոդ

Թեստ տերմինը առաջին անգամ օգտագործել է ամերիկացի հոգեբան Ջ. Կոտելլհոմը՝ 1890 թվականին: Այն ի սկզբանե օգտագործվել է հոգեբանության և սոցիոլոգիայի ոլորտներում՝ հետազոտություն կատարելու նպատակով: Թեստ բառն առաջաջել է անգլերեն test բառից,որը նշանակում է փորձ, փորձարկում կամ ստուգում, հետազոտություն: Ավելի ուշ ամերիկացի մանակավարժներն սկսեցին թեստը կիրառել որպես սովորողների ձեռք բերած գիտելիքների, դրանց ընկալման և կիրառման գնահատման և ստուգման ձև: Ուսումնական գործընթացում կիրառվող թեստերը կոչվում են մանկավարժական թեստեր: Կառուցվածքային առումով առաջադրանքների այդ համակարգն ունի բարդության աստիճաններ՝ աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների օբյեկտիվ գնահատման համար [2, էջ 65]:

Այսպիսով, թեստը խնամքով ընտրված հարցերի և առաջադրանքների ամբողջություն է, համակարգ, որի միջոցով ստուգվում է թեստավորման մասնակցի մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման մակարդակը:

Թեստային առաջադրանքն, ըստ էության, ստուգողական խնդիր կամ հարց է՝ պարտադիր կատարման պահանջով, կամ ենթադրյալ ճիշտ և սխալ պատասխաններով, կամ գործողության որոշակի ալգորիթմով: Ընդ որում, թեստավորման արդյունքները կարող են ծառայել մեկ կամ մի քանի նպատակաների. կատարել հայտորոշում, ստուգել չափորոշչային համապատասխանությունը, ուսուցման գործընթացի հետագա պլանավորում և այլն:

Թեստային առաջադրանքների համակարգը ունի իր ագորիթմը.

1.կատարելուհրահանգ…

2. հրահանգին հետևում է աշակերտի պատասխանը…

3. աշակերտի պատասխանը միավորներով գնահատելու սխեմա-համակարգ:

Յուրաքանչյուր հարց, ենթահարց, առաջադրանք և ենթաառաջադրանք հնարավորություն է տալիս թեստի միջոցով տարակարգել աշակերտների կարողությունները կամ կատարել աշակերտների տարբերակում:

Թեստը մշակելիս պետք է ուշադրություն դարձնել, թե ում ենք գնահատելու, ինչպիսի գիտելիքներ և հմտություններ ենք ստուգելու և ինչպես ենք կիրառելու գնահատման արդյունքները: Թեստի հիմնական հատկորոշիչները համարվում են, այսպես կոչված, «թեստի անձնագիրը, նախագիծը», ըստ որի որոշվում կամ կազմվում են թեստի կառուցվածքն ու բովանդակությունը:

Կախված թեմայի ուսուցման նպատակից և թեմայի յուրացման արդյունքում ակնկալվող վերջնարդյունքներից՝ որոշվում են թեստի տեսակը, բովանդակությունը և ստուգման մեթոդաբանությունը:

Գիտելիքների և կարողությունների գնահատման այս համակարգը ունի լայն հնարավորություններ, սակայն անդրադառնանք դրա առավելությունների և թերություններին: Ի տարբերություն գնահատման այլ ձևերի, թեստն ունի հետևյալ առավելությունները.

1. հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր բաժիններով ստուգել մեծածավալ ուսումնական նյութ՝ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ
2. հնարավոր է դարձնում արագ գնահատել մեծ քանակության սովորողների ուսումնական նյութի յուրացման աստիճանը
3. ապահովում է ռեսուրսների և ժամանակի խնայողություն: Մասնավորապես, հայտորոշման նպատակով կարող են օգտագործվել նաև էլեկտրոնային թեստերը
4. պարբերական կիրառման արդյունքնում սովորողների մոտ ձևավորում են կարգապահություն, ժամանակի ճիշտ տնօրինում
5. նվազեցնում է սուբյեկտիվության աստիճանը
6. համարվում է ուսումնական գործընթացի անհատական և տարբերակված մոտեցման արդյունավետ միջոց, ծրագրային նյութի յուրացման գործում հանդիսանում է կարևոր խթանիչ ուժ:

Թեստի թերություններից կարելի է առանձնացնել.

1. կիրառման սահմանափակությունը, քանի որ ամեն թեմա չէ, որի յուրացումը կարող է ստուգվել թեստի միջոցով: Դա հատկապես վերաբերում է ընդարձակ շարադրանք կամ վերլուծություն պահանջող առաջադրանքներին

2. դժվարություններ են առաջանում ստեղծագործական մտածողություն և երևակայություն պահանջող առաջադրանքների կատարման և գնահատման ժամանակ

3. կարող է ազդել ուսուցման ողջ գործընթացի վրա՝ թողնելով հակադարձ ազդեցություն: Այս հանգամանքը պայմանավորված է ստուգվող նյութի ընտրությամբ: Եթե ընտրված թեման լավ է ուսուցանվել, սովորողների կողմից լավ է ուսումնասիրվել և ընկալվել, համեմատաբար հեշտ է, ապա թեստը կունենա դրական ազդեցություն: Հակառակ պարագայում ազդեցությունը բացասական է: Այսպիսով, թեստը ավելի հարմար է կիրառել որպես գնահատման արագ, արդյունավետ և անաչառ միջոց, որը հարմար է կարճաժամկետ հատվածում շատ սովորողների ստուգելու և գնահատելու համար:

2. Թեստի բնութագրիչները

Թեստ կազմելուց առաջ, ուսուցիչը նախ պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

- Ո՞ր դասարանի համար է նախատեսված:
- Ի՞նչ կոնկրետ նպատակ է հետապնդում:
- Ո՞ր թեմայի կամ թեմաների վերաբերյալ է կազմված:
- Ո՞ր վերջնարդյունքներն են ստուգվելու:
- Ի՞նչ տիպի առաջադրանքներ են մշակվելու:
- ի՞նչ տեսակի հարցեր են կազմվելու՝ բա՞ց, թե՞ փակ:
- Քանի՞ հարց է ներառվելու:
- Բարդության Ի՞նչ աստիճան է ընտրվելու:
- Ինչքա՞ն ժամանակ է հատկացվելու ընդհանուր թեստին:

Ունենալով թեստի հատկորոշիչները՝ ուսուցիչը հեշտությամբ կարող է ստեղծել բազմաթիվ թեստեր, որոնց համար կարևոր է մշակել նաև ստուգման հարմար արագ և արդյունավետ տարբերակներ: Գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու դեպքում հնարավոր կլինի խնայել և ժամանակ, և ջանքեր:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել թեստի նպատակին և նախօրոք սահմանել, թե ինչ նպատակի պետք է ծառայի թեստը:

Ըստ նպատակի թեստերը կարող են լինել.

1. գիտելիքի ստուգման ընդհանրական թեստեր, որոնք տրվում են հանրակրթական հաստատությունների շրջանավարտներին՝ ավարտական վկայական տալու, բուհերի կամ հետազոտությունների համար ընտրություն կատարելու նպատակով: Այս թեստերը կազմվում են ուսումնական հաստատություններից դուրս՝ նախապես մշակված բնութագրիչների հիման վրա՝ համապատասխան պետական մարմնի կողմից հատուկ ընտրված հանձնաժողովի ուժերով

2. սովորողների առաջադիմության ստուգման թեստեր, որոնք տրվում են յուրաքանչյուր թեմայի ուսուցման, կիսամյակի կամ ուսումնական տարվա վերջում՝ նյութի յուրացման աստիճանը և մակարդակը ստուգելու նպատակով: Այդ թեստերը կարող են լինել ինչպես ամփոփիչ, այնպես էլ՝ ուսուցանող

3. հայտորոշիչ թեստեր, որոնք պարբերաբար տրվում են սովորողի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու, հետագայում ուսուցման գործընթացը բարելավելու նպատակով

4. տեղակայման կամ սովորողի ուսումնառության տեղը որոշող թեստեր, որոնք տրվում են դասընթացի սկզբում՝ սովորողներին տեղակայելու ըստ իրենց գիտելիքների և կարողությունների ունեցած պաշարի: Նման թեստերը սովորաբար կիրառվում են սովորողներին խմբերի բաժանելու և դասակարգելու, ուսուցման համապատասխան ծրագրերը ճշտելու նպատակով

5. արժևորման թեստեր, որոնց միջոցով գնահատում են ուսումնական ծրագրի արդյունավետությունը՝ որակյալ կրթության համակարգում

6. տարբեր մասնավոր նպատակների ծառայող թեստեր, որոնք տրվում են գնահատվող նյութի բովանդակության կամ ճանաչողական վարքագծի որևէ բաղադրիչ բացահայտելու համար[2, էջ 17]:

Թեստ կազմելիս հարկավոր է հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

1. հավաստիություն, որը պահանջում է թեստի նպատակի և թեստում ընդգրկված հարցերի և առաջադրանքների համապատասխանություն: Այլ կերպ ասած, ուսուցիչը պետք է ստուգի այն գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որոնք պլանավորել է ստուգել: Բացի այդ թեստի փորձարկման արդյունքները պետք է լինեն այնպիսին, որ հնարավոր լինի արդյունքները օգտագործել նախատեսված նպատակի համար: Առավել բարձր հավաստիություն հնարավոր է ապահովել, եթե հաշվի առնվի սովորողների պատրաստվածությունը, անհատական որակները , հարցերի և առաջադրանքների բովանդակությունը և բարդության աստիճանը:

Սա նշանակում է, որ թեստը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, ընդունակություններին և իմացական մակարդակին: Հաջողության հասնելու նախապայման են նաև այն հանգամանքները, թե որքանով է սովորողը ծանոթ թեստում ներկայացված առադրանքների և հարցերի տեսակներին, թեստի կառուցվածքին, որքանով է կարողանում տնօրինել ժամանակը և ինքնուրույն աշխատել:

Հավաստիությունը առավելագույնի հասցնելու համար անհրաժեշտ է, որ.

ա. յուրաքանչյուր հարցով ստուգվի ուսումնական ծրագրով նախատեսված որևէ

թեմայի յուրացումը կամ հմտության առկայությունը
բ. կիրառվի նպատակին համապատասխանող առաջադրանք:
2. հուսալիություն, որը ցույց է տալիս գնահատման գնահատման հաստատուն, կանոնական և համարժեք լինելը: Թեստը համարվում է հուսալի, եթե նույն չրը և տարբեր օրերին սովորողների միևնույն խմբին հանձնարարված նմանատիպ թեստի գնահատման արդյունքները գրեթե նույնն են ստացվում: Թեստը հուսալի է նաև այն դեպքում, երբ սովորողների միևնույն խմբում տրվում են երկու համարժեք թեստեր և ստուգման արդյունքները ստացվում են գրեթե նույնը:
Թեստի հուսալիությունը կարելի է առավելագույնի հասցնել , եթե.
ա. յուրաքանչյուր սովորողի տրվի միանգամայն նույն հարցերի ամբողջականությունը և նույն պայմաններում
բ. թեստը պարունակի մեծ քանակությամբ հարցեր, որոնցից յուրաքանչյուրը գնահատում է միևնույն կարողությունը
գ. գնահատումը թվանշանով արտահայտելիս հնարավոր լինի հետևոլ կանոնականությանը, լինել օբյեկտիվ:
3. թեստի անաչառություն, երբ թեստավորման արդյունքները պայմանավորված չեն գնահատողի անձով և նրա սուբյեկտիվ վերաբերմունքով: Երբ հարցերի ու առաջադրանքների կատարումը ենթադրում է մտածողության բարձր մակարդակ, գնահատման անաչառությունը աստիճանաբար նվազում է: Դա պայմանավորված է նրանով, որ ստեղծագործական մտածողությունը և երևակայության դրսևորումը դժվար է գնահատել:
4. արդյունավետություն , վերաբերում է գնահատման արդյունքում բավարար տեղեկություններ ստանալուն՝ նվազագույն ռեսուրսներ օգտագործելու միջոցով: Նման ռեսուրս են 5-6 բոպեանոց և 5 կարճ հարցից բաղկացած թեստերը:
5. օգտակարություն, ցույց է տալիս, թե ինչպես են սովորողները ընկալում և գնահատում թեստի արդյունքը կամ ինչ արժեք ունի այդ արդյունքը նրանց համար: Օգտակարությունը կարող է արժեքավորվել ուսուցչի, ծնողի և աշակերտի կողմից և օգտագործվել սովորելու ընթացքը լավացնելու համար[2, էջ 67]:

Թեստ կազմելի պետք է հաշվի առնել ոչ միայն թեստավորման նպատակը և կազմելու սկզբունքները, այլև թեստի համապատասխանությունը ստուգման և գնահատման նպատակին: Թեստի տուգման և գնահատման գործընթացի

պլանավորումը ևս կարևոր է: Դրա համար ուսուցիչը կարող է նաև կիրառել ինքնագնահատման և փոխադարձ գնահատման մեթոդը:

Օրինակ՝ ուսուցիչը կարող է առաջադրանքների ճիշտ պատասխանները նախապես գրել գրատախտակին կամ ցուցապաստառին և սովորողներին ցույց տալ թեստի կատարման ավարտից հետո: Սովորողները հնարավորություն կունենան համեմատելու իրենց աշխատանքի արդյունքները ճիշտ պատասխանների հետ և ինքնուրույն շտկել բացթողումները:

Ստուգման տարբերակ է նաև դասընկերոջ հետ աշխատանքների փոխանակումը՝ փոխադարձ ստուգումը և քննարկումը: Ուսուցիչը կարող է թեստում ներառված բովանդակությունը ներկայացնել մի փոքր այլ տարբերակով, և սովորողները ոչ թե մեխանիկորեն, այլ մտավոր աշխատանք կատարելով հասկանան՝ ճիշտ են կատարել առաջադրանքները, թե ոչ:

Կարևոր են ինքնագնահատումը և փոխադարձ գնահատումը, որի միջոցով սովորողները.

1. տեղեկանում են իրենց ուժեղ և թույլ կողմերի, բացթողումների և աշխատանքում թույլ տված սխալների մասին,
2. հնարավորություն են ունենում դրսևորելու և զարգացնելու որոշակի կարողություններ՝ վերլուծելու, համադրելու, պլանավորելու, ինքնարտահայտվելու, գնահատելու և այլն
3. զարգացնում են անձնային որակներ՝ համբերատարություն, նպատակասլացություն հանդուրժողականություն, օբյեկտիվություն, արդարամտություն և այլն:

3. Թեստի տեսակները

Կախված նպատակից կիրառվում են տարբեր տեսակի թեստեր, որոնք կարող են լինել տարբեր բովանդակությամբ, կառուցվածքով, գնահատման ձևով[1, էջ 274]: Կիրառվում են թեստերի հետևյալ տեսակները.

• ընդհանուր գիտելիքների ստուգման

• հայտորոշիչ

• ամփոփիչ

• տեղակայման թեստեր:

Ընդհանուր գիտելիքների ստուգման թեստերը տրվում են սովորողների ծրագրային նյութի յուրացման մակարդակը ճշտելու և ստուգելու նպատակով: Ընդհանուր գիտելիքների ստուգման թեստի հիմնական նպատակը' տվյալ առարկայից սովորողի չսվտրոշչային պահանջների և ամբողջ ծրագրային նյութի յուրացման մակարդակի ճշգրտումն ու գնահատումն է: Այդպիսի թեստերից են պատմություն առարկայից դպրոցի պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը: Այս թեստերը կազմվում են ոչ թե դպրոցի, այլ մեկ ուրիշ կազմակերպությունների կողմից:

Հայտորոշիչ թեստերը հիմնականում նպատակ ունեն խթանել և օգնել սովորողին բարելավելու իր առաջադիմությունը: Դրանք հնարավորություն են տալիս պարզել ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնպես էլ ամբողջ դասարանի ձեռքբերումներն ու բացթողումները ուսումնական գործընթացում ապահովելով հետադարձ կապ և բարելավելով ուսուցումը: Ուսուցանող նպատակով կարելի է օգտագործել կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստեր, որոնց արդյունքները միավորներով չեն գնահատվում: Դրանց իրական նպատակը ուսումնասիրած թեմայից կամ թեմայի մի մասից սովորողների ոչ թե միավորային գնահատումն է, այլ յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի յուրացման աստիճանի պարզումը, նյութը վատ յուրացրած կամ չյուրացրած սովորողների բացահայտումը՝ նրանց գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մասին տեղեկություն ստանալու նպատակով: Նման թեստերի կիրառումը հնարավորություն կտա ժամանակամիջոցում կատարել անհրաժեշտ շտկումներ և բարելավել նրանց ուսուցումը, նպաստել նրանց առաջընթացին: Այդ արդյունքները պետք են նաև ուսուցչին, որպեսզի բացահայտի բացթողումները և կարողանա ճիշտ պլանավորել իր հետագա աշխատանքը[2, էջ 13]:

Կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստերն ավելի ճկուն են, և դրանց արդյունքներն ավելի օբյեկտիվ, հուսալի և արդար են վերլուծությունների համար: Նման թեստերում ընդգրկվող առաջադրանքների հարցերը լինում են հիմնականում հետևյալ տեսակների՝

• ընտրովի պատասխանով,

• կարճ պատասխանով,

• համապատասխանեցման,

• բաց թողածը լրացնելու հարցերով[2, էջ 63]:

Հայտորոշիչ թեստը ունի հետևյալ առանձնահատկությունները.

• կիրառվում է ուսումնառության ընթացքում,

• կարճ ժամանակի համար է նախատեսված՝ 15 20րոպե,

• ստուգում է մեկ հիմնական գիտելիք կամ ունակություն,

• բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,

• առաջադրանքների տեսակները բխում են տվյալ թեմայի ուսուցման նպատակից,

• հարցերը ձևակերպված են կարճ, պարզ և մուստչելի,

• առաջադրանքները միջին բարդության աստիճան ունեն (1ին և 2-րդ մակարդակ), այնպիսին են, որ դրանք հաղթահարելի են սովորողների մեծ մասի կողմից,

• արդյունքները արագ են ստուգվում և արժևորվում,

• արդյունքները թույլ են տալիս մեկնաբանել սովորողի առաջադիմության աստիճանն ու կարիքները,

• արդյունքների վերլուծությունից, մեկնաբանությունից հետևում է օժանդակություն ըստ անհրաժեշտության:

Հայտորոշիչ թեստը տրվում են յուրաքանչյուր սովորողի կողմից տվյալ դասանյութի յուրացման աստիճանը պարզելու և նրա հետ հետադարձ կապի հաստատման նպատակով: Գրավոր կամ բանավոր արժևորման ժամանակ կարևորվում են ուսուցչի հետևությունները, մեկնաբանու-թյունները: Աշխատանքը վերլուծելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի ներկայացնել նյութի յուրացման իր մակարդակը, նկատված բացթողումները: Այդ վերլուծությունները և մեկնաբանությունները պետք է այնպես արվեն, որ օգնեն

սովորողին բարելավելու իր արդյունքները, ուսուցչի, սովորողի կամ ընկերների կողմից տանել համապա-տասխան աշխատանք՝ նկատված թերությունները շտկելու, ուսուցումը խթանելու համար:

Ամփոփիչ թեստերը հիմնականում ստուգողական բնույթի են: Ստուգումը կարող է իրականացվել տարբեր նպատակներով: Ամփոփիչ թեստի հիմնական նպատակը ամբողջական թեմայի կամ կիսամյակի ընթացքում անցած ծրագրային նյութի յուրացման մակարդակի ստուգումն ու ամվտվտումն է առարկայական չափորոշչի և ծրագրի պահանջներին համապատասխան:

Ամփոփիչ թեստեր անցկացվում են .

• որևէ կոնկրետ թեմա, ենթաթեմա կամ մի քանի փոքր թեմաներ ստուգելու և ամփոփելու նպատակով, որն իր մեջ պետք է ընդգրկի այդ թեմայի (թեմաների) կարևոր առանցքային հարցերը,

• կիսամյակը ամփոփելու նպատակով, որը տրվում է կիսամյակի վերջում' բացահայտելու կիսամյակի ընթացքում ուսումնասիրած ծրագրային ամբողջ նյութի յուրացման աստիճանը,

• տնօրինության կողմից վերհսկողություն ապահովելու նպատակով:

Ամփոփիչ թեստի առանձնահատկություններ են.

• տրվում է ուսուցման փուլի վերջում,

• ստուգում և գնահատում են ավելի խորը գիտելիքներ ու հմտություններ,

• հարցերը ձևակերպված են պարզ և մատչելի,

• հատկորոշիչները սահմանված են շատ հստակ,

• յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է մյուսներից անկախ,

• առաջադրանքները տրված են պարզից դեպի բարդ սկզբունքով,

• առաջադրանքների տեսակները բազմազան են,

• կատարմանը հատկաած է ավելի շատ ժամանակ ,

• այն հուսալի է, հավաստի, արդյունավետ և օբյեկտիվ:

Ամփոփիչ թեստը կարող է պարունակել թե՛ բազմակի ընտրությամբ, թե' կարճ պատասխան, թե' ընդարձակ կամ ստեղծագործական պատասխաններ պահանջող հարցեր: Թեստի յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար տրվում է առանձին միավոր, նշվում է գնահատման քայլը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է մյուսներից անկախ: Թեստի ասառաջադրանքների կատարման համար

տրվող գումարային առավելագույն միավորը կարող է տարբեր լինել 10 միավորից: Այդ դեպքում գումարային միավորը պետք է բերել 10 միավորային համակարգի:

Տեղակայման թեստերը տրվում են դասընթացի սկզբում սովորողներին ըստ իրենց գիտելիքների և կարողությունների մակարդակի տեղակայելու համար: Այն կազմակերպվում է ուսումնական տարվա առաջին կամ երկրորդ շաբաթվա ընթացքում: Սովորողների մնացորդային գիտելիքներն ու պատրաստվածության ընդհանուր մակարդակը պարզելուց հետո, ուսուցիչը պլանավորում է իր հետագա անելիքը և աշխատանք տանում բացթողումների շտկման համար:

4. Թեստային հարցերի և առաջադրանքների տիպերը

Ինչպես արդեն նշվեց, թեստը պետք է ունենա հստակ հատկորոշիչները: Դրանք կազմում են հարցարանի տեսական հենքը և տեղեկություն են տալիս հետևյալ հարցերի վերաբերյալ.

• ո՞ր դասարանի համար է նախատեսված,

• ի՞նչ նպատակ է հետապնդում, որ թեմայից կամ թեմաներից են ստուգվում սովորողի գիտելիքներն ու հմտություններ,

• առաջադրանքների քանակը,

• թեստի գնահատման առավելագույն միավորը,

• հատկացված ժամանակը,

• գնահատման չափանիշների միավորային աղյուսակ, որտեղ տրվում է յուրաքանչյուր առաջադրանքի համարը, այդ առաջադրանքի առավելագույն միավորը և դրա գնահատման յուրաքանչյուր քայլի միավորը:

Թեստը կազմվում է ըստ հատկորոշիչների, որտեղ ստուգվող թեմաները պետք է լինեն հստակ, ստուգվող գիտելիքը և հմտությունները խիստ որոշակի: Այդ ամենը հաշվի առնելով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել առաջադրանքների տիպերի ճիշտ ընտրությանը:

Թեստը կազմելիս առաջադրանքները ներառվում են գիտելիքի պարզ իմացություն, ըմբռնում, կիրառում և ավարտվում բարձրակարգ ճանաչողական հմտություններով՝ վերլուծություն, համադրում և արժևորում: Թեստում առաջադրանքները պետք է դասավորվեն պարզից դեպի բարդը սկզբունքով՝ ըստ Բենջամին Ս.Բլումի

ճանաչողական վարքի աստիճանակարգի (տաքսոնոմիայի).
*Գիտելիք, սովորողը կարող է հիշել ուսուցման ընթացքում ստացած գիտելիքը կամ տեղեկատվությունը: Այն կարող է լինել կանոնների, դիագրամների, փաստերի և այլի տեսքով:
*Ընկալում, սովորողը կարող է հասկանալ ստացած գիտելիքը կամ տեղեկատվությունը և մեկնաբանել սեփական բառերով, օրինակ բերելու միջոցով և այլն:
*Կիրառում, սովորողը կարող է կիրառել գիտելիքը' կամ տեղեկատվությունը՛ օգտագործելով այն կոնկրետ գործողությունների մեջ: Դրանք կարող են լինել հաշվելը, գրելը, խնդիր լուծելը, մեծությունների համեմատելը և այլն:
*Վերլուծություն, սովորողը կարող է վերլուծել գիտելիքը կամ տեղեկատվությունը, տրոհել մասերի' գտնել նրանց միջև եղած կապը, առանձնացնել կարևոր և ոչ կարևոր տեղեկատվությունները:
*Համադրում, սովորողը կարող է օգտագործել տարբեր աղբյուրներից
ստացած գիտելիքը կամ տեղեկատվությունը:
*Արժևորում, սովորողը կարող է գնահատել գիտելիքը կամ տեղեկատվությունը' կատարելով դատողություններ, եզրահանգումներ:
Քանի որ թեստը կազմվում է որոշակի նպատակով, սովորողներին գնահատելու և նրանց ուսումնական գործունեությունը արժևորելու համար, պետք է խնամքով ընտրել նաև առաջադրանքների և հարցերի տեսակները: Դիտարկենք հարցերի և առաջադրանքների տեսակները՝ տեղայնացված պատմություն առարկայի չափորոշչային պահանջներին համաձայն[2, էջ 50]:

Հարցը ուղղորդող ցուցումներով առաջադրանք կատարելու հանձնարարական է, որն ակնկալում է աշակերտի պատասխանը: Այն անհրաժեշտ է ձևակերպել պարզ, հստակ: Հարցը պետք է ունենա միանշանակ պատասխան: Հարցերի տեսակներն են.
1.փակհարց
2. բաց հարց:
Հարցերի հիմնական իմաստային դասակարգումը տեղի է ունենում կախված նրանց տրամաբանական հնարավոր պատասխաններից:

1. Այո–ոչ հարցի (նաև կոչվում է բևեռային հարց), կամ ընդհանուր հարց նպատակն է պարզել արդյոք որոշ պնդումներ ճշմարիտ են թե ոչ: Դրանց սկզբունքորեն կարելի է

պատասխանել «այո» կամ «ոչ» բառերի միջոցով։
Օրինակ, Տրված պնդումներից որոնք են ճիշտ և որոնք սխալ.
ա. Բագրատունյաց բանակը կազմված էր հեծելազորից և քանակով քառակի անգամ մեծ հետևակից

բ. Հայոց զորքի հիմքը այրուձին՝ հեծելազորն էր
գ. Եկեղեցին ապահովում էր Բագրատունյաց Հայաստանի միասնականությունը
դ. Եպիսկոպոսական բոլոր թիմերը ենթական էին հայոց թագավորին։
ճիշտ- բ, գ սխալ-ա, դ

2. Այլընտրանքային հարցը՝ ներկայացնում է երկու կամ ավելի դիսկրետ ընտրություն՝ որպես հնարավոր պատասխաններ՝ ենթադրելով, որ դրանցից միայն մեկն է ճշմարիտ։

Օրինակ, Ե±բբ է տեղի ունեցել Բաշկադկլարի ճակատամարտը.
ա. 1853 թ հունվարին գ. 1853 թ հուլիսին
բ. 1853 թ նոյեմբերին դ. 1853 թ հոկտեմբերի

3. Բաց հարցը, որը նաև կոչվում է փոփոխական հարց, ոչ բևեռային հարց կամ հատուկ հարց ընդունում է անորոշ շատ հնարավոր պատասխաններ։ Նման հարցերը պահանջում են պատասխանների լայն ցանկ կամ երևակայություն, արդյունքները դժվար է համադրել և թվայնորեն ներկայացնել։
Օրինակ, Ինչ քաղաքականություն էր Վարում Տիգրան III-ը։

4. Փակ հարցի դեպքում առաջարկվում են նախապես սահմանված սահմանափակ քանակությամբ պատասխաններ։
Ըստ կառուցվածքի նման է այլընտրանքային հարցին։
Թեստեր կազմելիս օգտագործում են հիմնականում հարցերի և առաջադրանքների հետևյալ տեսակները.
• մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ
• համապատասխանեցման
• բաց թողածը լրացնելու
• կարճ պատասխան պահանջող

• ընդարձակ պատասխան պահանջող

• ստեղծագործական մոտեցում պահանջող:

Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին [1, էջ 273] [4]:

1.Մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանքները կազմված են հարցից և 3 կամ 4 այլընտրանքային պատասխաններից: Թեստային առաջադրանքների այս տիպը պահանջում է, որ ճիշտ կամ սխալ պատասխանները հստակ ձևակերպված լինեն: Լավ կազմած առաջադրանքներում սխալ պատասխանները հաճախ ճշմարտացի են թվում: Սխալ պատասխանները անվանում են շեղիչներ(դիստրակտորներ): Այսպիսի առաջադրանքի առավելությունը այն է, որ դա հեշտ է ստուգելն ու գնահատելը, գնահատումն օբյեկտիվ է, բայց թերությունն այն է, որ դժվար է նման առաջադրանքներ կազմելը, որտեղ հարցերը միանշանակ լինեն, իսկ ապակողմնորոշող պատասխանները ճշմարտանման:

Օրինակ,

Ով է Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ հերոսը.

ա. Գևորգ Վարդանյան գ.Լազր Չափչախյան

բ. Հունան Ավետիսյան դ. Նելսոն Ստեփանյան

2.Համապատասխանեցման առաջադրանքները հաճախ կիրառվում են համադրման հմտությունները ստուգելու նպատակով: Սովորողը պետք է զծով միացնի համապատասխան

կամ համազոր հասկացությունները, իրադարձություն- տարեթիվ զույգեր կազմի և այլն:

Օրինակ,

Կատարել համապատասխանեցում.

1. Էմինի ճանապարհվելը Պետերբուրգ

2. Էմինի ժամանելը Հայաստան և իրավիճակի հետ ծանոթանալը

3. Էմինի ծառայության անցնելը Անգլի մեկնող մի նավում և ուղևորվելը Անգլիա

4. Էմինի և Հերակլի խրախուսական նամակներ ուղարկելը Հովնանին

5. Էմինի վերադարձը Հնդկաստան

6. Էմինի վերադարձը Հայաստան

ա. 1726թ. բ. 1751թ. գ. 1759թ. դ.1761թ. ե.1764թ. զ. 1766թ. է. 1770թ.

ա) 1ա, 2բ, 3ե, 4գ, 5դ,,6է գ) 1դ, 2ա, 3գ, 4ե, 5զ, 6է

բ) 1գ, 2ա, 3բ, 4ե, 5է, 6զ դ) 1դ, 2գ, 3բ, 4ե, 5է, 6զ:

Համապատասխանեցման օրինակ են իրադարձությունների ժամանակագրական հաջորդականության կազմումը.

Օրինակ,

Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Արածանիի բ. Մագնեսիայի գ. Տիգրանակերտի դ. Գավգամելայի ե. Խառանի

1) բդգաե 2)դբաեգ 3)բդգաե 4)բդեգա

3. Բաց թողածը լրացնելու առաջադրանքում սովորողը պետք է լրացնի նախադասության մեջ բաց թողնված բառը կամ բառերը: Այս առաջադրանքների նպատակն է ստուգել պատմություն առարկայից տեսական նյութի և իրադարձությունների իմացությունը:

Օրինակ,

Մոնթե _____ զոհվել է 1993թ. հունիսի 12-ին՝ _____ մոտ՝ Մարզիլու գյուղում:

4. Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներում սովորողին ներկայացվում է հարցը, որին հաջորդում է պատասխանի երկու տարբերակ՝ այո կամ ոչ: Նման հարցերին պատասխանելը հեշտ է, որովհետև սովորողները կարող են հեշտ գուշակել պատասխանը: Կարճ պատասխան պահանջվող առաջադրանքներ կազմելը ուսուցչի համար հեշտ է և նրանից շատ ժամանակ չի պահանջում:

Օրինակ.

Հեթանոս հայերի հյուրընկալության աստվածը Միհրն է.

ա. այո բ. ոչ

5. Ընդարձակ պատասխան պահանջող հարցը համարվում է կատարված, եթե մանրամասն ներկայացվում է հարցին համապատասխան մանրամասն շարադրանք՝ պահպանելով տրամաբանական շաղկապվածությունը և պատճառահետևանքային կապերը:

Այսպիսի առաջադրանքի առավելությունն այն է, որ նրանով ավելի հիմնավոր և օբյեկտիվ է ստուգվում ու գնահատվում սովորողների գիտելիքները: Գնահատվում է ոչ միայն ամբողջ առաջուադրանքի ճիշտ կամ սխալ կատարումը, այլև յուրաքանչյուր ճիշտ կատարած քայլը: Բայց նման առաջադրանքի կատարումը սովրողից շատ

ժամանակ է պահանջում:

Օրինակ.

Պարզաբանեք Հայաստանի տարածքի պատմաաշխարհագրական պայմանները և առանձնահատկությունները:

6. Ստեղծագործական մոտեցում պահանջող առաջադրանքների կատարումը սովորողներին ինքնաարտահայտման հնարավորություն է տալիս, նպաստում ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Դրանք օգնում են ստուգել սովորողների ավելի բարձր մակարդակի գիտելիքներն ու հմտությունները: Այս առաջադրանքներում պատահական ճիշտ պատասխանի հավանականությունը հասցրված է նվազագույնի:

Օրինակ, Պատկերել Ավարայրի դաշտում զորքերի տեղադրությունը:

Ըստ բարդության աստիճանի առաջադրանքները դասակարգվում են.

1. 1-ին կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշիչային գիտելիքների իմացություն, պարզ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար չեն պահանջում ինքնատիպ (ոչ ստանդարտ) մոտեցումներ, միջնորդավորված քայլեր ու հիմնավորումներ,

2. 2-րդ կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների կայուն իմացություն, ոչ բարդ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ենթադրում են որոշակի հայտնի մեթոդներ, միջնորդավորված քայլեր, ոչ բարդ հիմնավորումներ՝ առանց ինքնատիպ մոտեցումների,

3. 3-րդ կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր իմացություն, բարդ կամ ոչ լրիվ ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ենթադրում են ինքնատիպ մոտեցումներ, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլեր, կառուցումներ, արտածումներ, հիմնավորումներ,

4. 4-րդ կարգի կամ առավել դժվար առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութին վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր և խորն իմացություն, բարդ կամ անծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ենթադրում են բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, օժանդակ կառուցումներ, արտածումներ, հիմնավորումներ, կռահումներ[1, էջ 271]:

5. Պատմություն առարկայից թեստի կազմման առանձահատկությունները

Պատմություն առարկայից թեստի կազմման ժամանակ պետք է հաշվի առնել առարկայի առանձնահակտությունները, չափորոշչային պահանջները ակնկալվող վերջնարդյունքները և թեստի անցկացման նպատակը:
Քանի որ առարկայի շնորհիվ սովորողը կարողանում է ճանաչել և գնահատել հասարակական զարգացման տարածաժամանակային բնութագրերը, դրանց էական կողմերը, զարգացման միտումները , բացահայտել զարգացումների պատմական հիմքերը, ցանկալի է թեստի մեջ ընդգրկել այնպիսի հարցեր և առաջադրանքներ, որոնց շնորհիվ կստուգվեն գիտելիքների, կարողությունների և հմտությունների առանձին տեսակներ:
Պատմություն առարկայից գիտելիքների նախնական և ամփոփիչ ստուգման նխատակով կիրառելի են և հայտորոշիչ և ամփոփիչ թեստերը:
Հայտորոշիչ թեստերի համար սահմանվում է 20-25 րոպե տևողություն: Ընդգրկած առաջադրանքները հիմնականում լինում են կարճ պատասխան ակնկալող, բազմակի ընտրությամբ, պնդումով, կանոնակարգված՝ հաջորդականությունների կազմում:
Ամփոփիչ թեստերն ավելի ընդարձակ են,սահմանվում են 45 րոպե տևողության համար:
Ընդգրկված հարցերն ու առաջադրանքները ընտրվում են հետևյալ սկզբունքով.
*Առաջադրանք ճիշտ պատասխանի ընտրությամբ
*Կարճ պատասխան պահանջող առաջադրանք
*Ընդարձակ պատասխան պահանջող թեստային առաջադրանք
*Ընդարձակ պատասխանով առաջադրանք՝ շարադրանք:
Բացի այդ, ամփոփիչ թեստում անհրաժեշտ է ընդգրկել տարբեր բարդության առաջադրանքներ, ընդ որ, տոկոսային հարաբերակցությամբ պետք է բաշխվեն հետևյալ կերպ.

1. Առաջին և երկրորդ տիպի առաջադրանքներ, պետք է կազմեն ամբողջ թեստի առաջադրանքերի 60%-ը

2. Երրորդ տիպի առաջադրանքներ, պետք է կազմեն ամբողջ թեստի առաջադրանքերի 30%-ը

3. Չորրորդ տիպի առաջադրանքներ, պետք է կազմեն ամբողջ թեստի առաջադրանքերի 10%-ը [1, էջ 271]:

Կից ներկայացնում եմ Պատմություն առարկայի

Թեմատիկ ամփոփիչ թեստի օրինակ[4].

Թեմատիկ գրավոր աշխատանք

1.Ե՞րբ ստեղծվել Արմենական կուսակցությունը .

ա. 1887թ. բ.1885թ. գ. 1890թ. դ. 1888թ

2.Ե՞րբ է ստորագրվել Թուրքմենչայի պայմանագիրը՝

ա. 1812թ. մայիսի 16 բ. 1828թ փետրվարի10

գ. 1813թ հոկտեմբերի12 դ. 1829թ սեպտեմբերի 2

3. Ե՞րբ է ստորագրվել Բուխարեստի պայմանագիրը՝

ա. 1812թ. մայիսի 16 բ. 1828թ փետրվարի10

գ. 1813թ հոկտեմբերի 12 դ. 1829թ սեպտեմբերի2

4.Ո՞ւմ էին կոչում Հայրիկ .

ա. Մկրտիչ Խրիմյան բ. Գևորգ Ե գ. Ներսես Աշտարակեցի դ. Վազգեն Ա

5. Ե՞րբ է տեղի ունեցել Բայազետի հեևոսական պաշտպանությունը

ա. 1853թ. բ. 1896թ գ. 1877թ դ. 1878թ

6. Ո՞վ էր 1862թ Զեյթունի ապստամբության ղեկավարը

ա. Մարկոս Թաշճյան բ. Մահտեսի Գրիգոր գ. Մ. Յաղուբյան դ. Ս. Շովրոյան

7.Ինչպե՞ս էր կոչվում Մ Բաղրամյանի խմբագրած աշխատությունը

ա. Ազդարար բ.Հնչակ գ.Նոր տետրակ դ. Դրոշակ

8.Ֆիդայի արաբերեն բառ է, որ նշանակում է՝

ա. Ինքնազոհ բ. Տասնապետ գ. Հետևակ դ. Հարյուրապետ

9. Ո՞ր քոչվոր ցեղերին պարտության մատնեց Դավիթ Բեկը՝

ա. քրդեր բ. չերքեզներ գ. Ջևանշիր դ. չելլո

10. Որտե՞ղ է հիմնադրվել Հնչակյան կուսակցությունը՝

ա. Թիֆլիս բ. Վան գ. Մարսել դ. Ժնև

11. Որտե՞ղ է գտնվում Գելիեզուզան գյուղը՝ ա. Մոկք բ. Խութ

գ. Բասեն դ. Սասուն

12. Որտե՞ղ է ծնվել Հրայր Դժոխքը

ա. Սասունի Մկդենք գյուղում բ. Խլաթի Սոխորդ գյուղում

գ. Շապին-Գարահիսարում դ. Ահարոնք գյուղում

13.Բացատրեք հասկացությունը՝

Կեսկես , թանզիմաթ , Հայկական հարց , պոլոժենիե , պանիսլամիզմ , ցեղասպանություն

14. Լրացրեք բաց թողնվածը .

ա. Երևանում ստեղծված ազատագրական խմբակը կոչվում էր _____-

բ._____թ. կանոնադրությամբ սահմանվում էին հայոց եկեղեցու իրավունքները և պարտականությունները

գ.Զեյթունի 1895-96թթ ապստամբության ժամանակ աչքի ընկան _____և _____:

15. Երբ է տեղի ունեցել արևմտահայության առաջին ցեղասպանությունն ու ինչ հետևանքներ է ունեցել:

16. Իրադարձությունները դասավորեք ժամանակագրական հաջորդականությամբ

ա. ՀՅԴ ստեղծումը բ. Վանի հերոսամարտը գ. Սասունի ինքնապաշտպանությունը դ. Թուրքմենչայի պայմանագրի կնքումը

17. .Դասավորել ըստ ստեղծման հաջորդականության

ա. <<Սև խաչ>> խմբակ բ. Արմենական կուսակցություն գ. <<Բարենպատակ ընկերություն>> դ. Մարտական հրահանգների հրատարակումը ե. <<Միություն ի փրկություն>> , զ. Հնչակյան կուսակցություն

18 **Կատարեք համապատասխանեցում**

ա.Համբարձում Պոյաճյան	1. Հրայր Դժոխք
բ.Արմենակ Ղազարյան	2. Անդրանիկ
գ.Արաքել Մխիթարյան	3. Նիկոլ Դուման
դ.Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան	4.Գևորգ Չավուշ
ե.Գևորգ Ադամյան	5.Աղբյուր Սերոբ
զ.Սերոբ Վարդանյան	6. Մեծն Մուրադ
	7. Արաբո

19.Ներկայացնել մեծ տերությունների դիրքորոշումը 1890-ական թթ հայկական կոտորածներին :

Եզրակացություն

Այսպիսով, թեստերը միջոցներ են, որոնցով ստուգվում և գնահատում են սովորողների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Թեստերը որպես չափման գործիք, լավագույնս կծառայեն նպատակին, եթե կազմվեն.
*նպատակային

* առարկայական չափորոշչի և ծրագրային նյութին համապատասխան
*անցնեն փորձաքննություն

* հաշվի առնվեն թեստ կազմելու պահանջները և միջազգային փորձը:

Բացի այդ, թեստը պետք է համապատասխանի չափման նպատակին: Չափումը կարող է կատարվել տարբեր նպատակներով.

1. ընտրություն (սովորողների մի սահմանափակ քանակ ընտրելու՝ օժտված երեխաների ընտրություն, օլիմպիադայում սովորողի տեղը որոշելը և այլն),
2.աշակերտի առաջադիմության արձանագրում,
3. հայտորոշում (սովորողի ուժեղ և թույլ կողմերի բացահայտում),

4.արժևորում (սովորողի կամ ուսուցչի աշխատանքի կամ ծրագրի արդյունավետության գնահատում),
5. հաշվետվություն և այլն:

Ցանկացած թեստ պետք է նպաստի սովորողի ուսուցման բարելավմանը և առաջընթացին՝ ապահովելով այնպիսի կարողություններ և հմտություններ, ինչպիսին են.

ա. ստացած գիտելիքի մեկնաբանություն սեփական բառերով
բ. գիտելիքի, տեղեկատվության կամ հմտության կիրառություն կոնկրետ գործողության մեջ

գ. տեղեկատվության վերլուծություն, գնահատում, արժևորում , պատճառահետևանքային կապերի լուսաբանում

դ. Ինքնուրույն դատողություններ և եզրահանգումներ անելու կարողություն:

Այս ամենը հնարավոր է միայն առաջադրանքների պարզից բարդ սկզբունքով կազմելու, առաջադրանքների տարբեր տեսակներ կիրառելու, առաջադրանքների խելամիտ քանակ ընդգրկելու և ժամանակի ճիշտ սահմանման/տնօրինման շնորհիվ:

Օգտագործված գրականություն

1. Մ. Զ. Հակոբյան, Ա. Գ. Կիրակոսյան, Վ. Ա. Մանուկյան, «Թեստերի մշակման կարևոր բաղադրիչները և դրանց ներկայացվող պահանջները», Դասավանդման Մեթոդիկա, Գիտական Տեղեկագիր, 2014, 270-275 էջեր

2. 0. Միքայելյան, Ս. Միքայելյան, Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման միջոց, Երևան 2010:

3. Ս.Վարդումյան և ուրիշներ, ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, 2009:

4. §Հայոց պատմություն. 2013թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան¦, Զանգակ-97, Երևան, 2013թ: